

ԼՎՈՎԻ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ ԵՒ Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԶՕՀՐԱՊԵԱՆԻ ՑՈՒՑԱԿԸ

Միջնադարի մեր մատենադարան-գրադարանների, նրանց պարունակած ձեռագիր եւ տպագիր գրքերի անուանացանկերի, հնում նոյն գրքերի գործածութեան եղանակ-սկզբունքների եւ այլ մանրամասների ուսումնասիրման կարեւորագոյն սկզբնաղբիւրները հին եւ համեմատաբար նոր ժամանակներում կազմուած եւ չտպագրուած-չքննուած բազմաթիւ գրացուցակները կամ գրացանկերն են, նաեւ ձեռագրական յիշատակարաններում՝ նոյն ձեռագրերի ստացողներին պատկանած ձեռագիր եւ տպագիր գրքերի բաւական յաճախ առկայ թուարկումները: Սակայն այստեսակ նիւթերի¹ հետազոտման ասպարէզը կարելի է ասել՝ խոպան վիճակում է. հրատարակուել եւ բազմիցս արծարծուել է ընդամէնը երկու գրացուցակ. Բաղէշի Ամլորդուոյ վանքինը² եւ Սաղմոսավանքինը³:

- ¹ Այդպիսի աղբիւրների մի այլ տեսակ են մեր վանքերի եւ եկեղեցիների ընծայամատեանները (ֆթօուկները), որոնց աւելի քան քսան միաւոր պատրաստել ենք հրատարակութեան. սրանց գրագիտական արժէքի մասին համառօտ պատկերացում ենք տուել մեր հետեւեալ հրապարակման մէջ. *Վենետիկի հայոց Սուրբ Խաչ եկեղեցու ընծայամատեանը*, ի «*Էջմիածին*», 2013, ԺԱ., 60-83. յատկապէս՝ էջ 67:
- ² Վարդանայ վարդապետի Բաղիշեցոյ ցուցակ գրոց Ամրդօրու վանուց, ՏԵՐ-ՅԱ.ԿՈՐԵԱՆ, Ս., (հրտ.), ի «*Արարատ*», 1903, Բ.-Գ., 176-189. Վերահրատ.՝ «*Արարատի*» ժառանգութիւնը, Ժ. «*Արարատ*» ի բնագիրներ, հտ. Բ., հրտ. պատրաստեց՝ Սուսաննա Նահապետեան, դասակարգումը, խմբագրումը եւ առաջաբանը՝ Գեորգ Տէր-Վարդանեանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Ս. Էջմիածին 2017, 665-672:
- ³ [ԴԱ.ԴԵԱՆ], ԽԱԶԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ, *Նորագիւտ մագաղաթեայ նոտրագիր ցուցակ Սաղմոսավանից մատենադարանի, Շողակաթ, Ս. Էջմիածնի հա-*

Մեր առաջարկով բանասէր Լիլիթ Յովսէփեանն սկսել է ձեռագրերում ցրուած գրացուցակների եւ յիշատակարաններում առկայ թուարկումների համադիր քննութեան բարդ եւ երկար տեւելիք աշխատանքը, իսկ մենք այս հրապարակմամբ ներկայացնում ենք ԺԸ.-ԺԹ. դարերի սահմանագծի Մխիթարեան արգասաւոր մտաւորական-հոգեւորական Հայր Յովհաննէս վարդապետ Զօհրապեանի (1756-1829) կազմած շատ արժէքաւոր՝ Լվովում իր տեսած եւ արձանագրած ձեռագրերի եւ կոնդակների ցանկերը⁴:

* * *

Նախ նկատենք, որ Մխիթարեան միաբանութեան Վենետիկի եւ առանձնապէս Վիեննայի միաբանների տեւական ջանքերի շնորհիւ Արեւելեան Եւրոպայից հայերէն ձեռագրերի բաւական մեծ քանակ փրկուել եւ ժողովուել է իրենց վանքերի մատենադարաններում⁵, այլեւ՝ այդ տարածքի մեր ձեռագրերին վերաբերող գիտական բաւականաչափ գրականութիւն եւ անդրադարձներ կան: Այդուհանդերձ՝ Լեհաստանի, Ուկրայինայի, Ռումինիայի, Մոլդովայի եւ Հունգարիայի տարածքների հնադարեան հայկական հոծ գաղթականութիւնների՝ վաղուց ի վեր ուժացած-վերացած լինելը⁶ մեզ պարտադրում է նրանց պատկանած ձեռագիր եւ տպագիր գրականութեան միաւոր-միացորդներ փնտռել նոյն այդ երկրների հնարաւոր բոլոր տեղերում՝ պետական եւ

յագիտական ժողովածու, Գիրք առաջին, Նուիրուած հայ գրի եւ տպագրութեան մեծ յոբելեանին. 412-1512-1912, Վաղարշապատ 1913, 167-169:

- 4 Հրատարակութեան ընթացքի մէջ է այս հեղինակին վերաբերող մեր մի այլ յօդուածը՝ «Յովհաննէս վ. Զօհրապեանի ձեռագրական եւ քննադատական վաստակը. ինքնակենսագրականը»:
- 5 Խնդիրս հիմնականում Մխիթարեանց Վենետիկի մատենադարանի ձեռագրերն են, ուստի, որպէսզի ամէն անգամ երկար վերնագրեր չգրենք, յօդուածիս վերջում գետեղել ենք նոյն մատենադարանի ձեռագրացուցակի ուրիշատրեակի մատենագիտական նկարագրութիւնը, որի հիման վրայ շարադրանքիս մէջ կամ տողատակերում մեր յաճախակի յղումներն անելու ենք կարգ՝ «Վենետիկի ցուցակ» եւ հատորի ու էջերի համարներն ձևով:
- 6 Ուժացման ընթացքի առաւել քան զգայացունց մի նկարագրութիւն տե՛ս Բոնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հոռովայ. Ժամանակակից յիշատակարանը, [հրտ. Կարապետ Նզեանց], Ս. Պետերբուրգ 1884, էջ Է.-ԽԲ.:

Հասարակական հաստատություններից մինչև ընդհուպ՝ իրենց հայկական ծագումը յիշող անհատների տների ձեղնայարկերը: Այդպես ենք մտածում, որովհետև վերջին տարիներին Մոնիկա Ազոփսովիչ անունով մի երիտասարդ կին Վարչապետի իր հիմնադրած «Լեհահայոց մշակոյթի եւ ժառանգութեան ընկերութիւն» հասարակական կազմակերպութեան ջանքերով տարբեր տեղերից յիստորիկոս ձեռագիր է ժողովել. ըստ այդմ՝ ցանկալի է եւ պէտք է նոյն աշխատանքն անել նաեւ հնում հայկական զգալի բնակչութիւն ունեցած բոլոր վայրերում:

Առկայ տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ ԺԴ.-ԺԹ. դարերի ամբողջ ընթացքում շրջանառութեան կամ գործածութեան մէջ ձեռագիր եւ տպագիր գրականութեան բաւական մեծ քանակ է եղել, ուստի եւ համադիր ու հնարաւոր ամբողջական քննութեամբ պէտք է պատկերել Արեւելեան Եւրոպայի հայկական եկեղեցական-մշակութային առանձին կենտրոնների մատենադարանների ունեցած ձեռագիր եւ տպագիր գրքերի քանակական, որակական եւ բովանդակային պատկերները, այդ ամէնի հիման վրայ էլ ցանկալի է հիւսել ամբողջութեան նկարագիրը, պարզել ժամանակին եղած ամբողջը եւ պահպանուած-մեզ հասածը⁷: Ըստ այդմ բերենք խնդրի հէնքին վերաբերող մեզ յայտնի որոշ փաստերի մասին վկայող երբեմն ընդարձակ քաղուածքներ.

«Կամենից Տարեգրքում» 1564 թուականի ներքոյ կայ հետեւեալը. «ԹՎ. ՌԺԳ. Նոյեմբեր ամսեան Գ. Ոմն Լեկադ Հոռմայ Փափայէն եկաւ ի Կամենիցս, յաղագս նուիրակութեան համար. եւ էր ինքն գրասէր ոմն եւ կատարեալ գիտուն. եւ զՀայոց գրեանք ուր եւ որչափ գտաւ, զամենեցուն գիտրագիրն նոտրեց եւ գիր էառ. եւ էր ինքն տղահասակ ոմն»⁸:

7 Մասնաւոր խնդրի վերաբերող՝ միայն Մաշտոցեան Մատենադարանի նիւթը ներկայացնող եւ աւելի շատ ժողովրդական ընթերցման համար նախատեսուած պատկերագրային հրատարակութիւն է հետեւեալը՝ ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ, Փ., *Լեհահայեր. ձեռագրական ժառանգութիւն*, Կագմուել է Մատենադարանի ձեռագիր հաւաքածուների հիման վրայ. Լվովում հայկական քեմի հիմնադրման 650-ամեակի (1367-2017) առթիւ, «Աստղիկ», Երեւան 2017, 140 էջ:

8 *Կամենից. Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումինիոյ, Հաւաստեալ յաւելուածով*, [հրտ. Հ. Ղ. Ալիշան], Ս. Ղազար, Վեներտիկ 1896, 35 (այսուհետեւ՝ *Կամենից*). նոյնը տե՛ս նաեւ «Բագմավէպ», Ժ (1852), քիւ

Լվովի հայկական եկեղեցիների ձեռագիր գրքերի քանակի եւ որակի մասին մանրամասներ առաջինը 1636 թուականին յայտնել է Սիմէոն Լեհացի մատենագիրը. «Զոր ի քվին Ռէթ. (1630) ել ոմն մեծագգի եւ փարթամաց զարմի Նիկոլ անուն, Թորոսեց նախնական անուամբ կոչեալ, մանուկ տիօք եւ տգետ մտօք, խաւարեալ խորհրդով եւ անիմաստ հանճարով, անուղա վարուք, վատ եւ ապիրատ ամենայն իրս եւ ի գործս, լիրբ, յանգգամ եւ անդուգն, ի կարգս աստիճանի դպիր գոյով. եւ լեալ ԻԳ. (23) ամաց, կաշառօք ձեռնադրեցաւ եպիսկոպոս ի Մելիխեթ կաթողիկոսէ, յորժամ երեք զնա մեր մեղքն ի Լով... Ապա սկսաւ վատնել եւ կորուսանել զինչս եւ զխագինայս՝ զոսկիդէն եւ արծաթեղէն անօթս, զմեծամեծ խաչսն, պատվական եւ ոսկեօծ ըսկիհս, ծանրաշէն բուռվառսն, մեծագին բշոցսն եւ արծաթի խնկատուփսն, զուտր արծաթի նրագարանս՝ փոքր եւ մեծամեծսն, թող զշուրջառսն, զխաչվառսն, զեմիփորոնս եւ մեծագին թագս հայրապետաց՝ ոսկով եւ մարգարտով եւ ակամբք ընդելուզեալ, եւ վարշամակս յովով զուտր մեծամեծ մարգարտովք շարեալ, զոր ԵՃ. (500) ամաց հետէ ժողովեալ էր աստուածասէր տանուտէրաց եւ քարի եւ երկիւղաց կանանց եւ տանտիկնանց, զոր ոչ երբեք գտանիւր այլ աշխարհ այնպիսի թօհվայք եւ անգիւտ իրք: Թող զարծաթապատ ոսկիակազմ մագաղաթ ոսկեգիր քազում Աւետարանս եւ յովով Շարակնոցս, ոսկով եւ լազվարդով նկարեալ պատուական պատկերս եւ Բ. ԳՃ. (200-300) ազնիւ գրեանս վարդապետականս՝ ի թագաւորական խագնայէ ի դուրս ելած՝ մանաւանդ Սըսու եւ Քափայու, Բ. Գ. (2-3) Աստուածաշունչք, այլեւ Մեկնիչք եւ Քաղուածք, Փիլոն գիրք եւ Քարոզգրքեր, Տօնականք, Սարգիսգիրք, Սաղմոսի Մեկնիչք եւ Արարածոց Մեկնիչք եւ այլ անթիւ ազնիւ գրեանք, նաեւ յովով արտաքին գիրք, զորս ոչ կարեւ մի ըստ միոջէ գրել, զի ձանձրասցին լսողքն: Եւ զայն ամենայն վերոյգրեալ Մարայ խագինսն ի միում ամի կորոյս եւ ոչընչացոյց, նա եւ զգրեանս ամենայն ընդ նոսին՝ զորս ծախէր եւ վաճառէր, զկէսս գրաւէր հրէից եւ այլ եւ այլ ցեղից, զայլս հաւէր եւ ի պէտս մարմնաւոր մսխէր, եւ զորս փոխէր ընդ ոչինչ իրս անպիտան եւ մարմնաւոր. տայր զոսկին եւ առնոյր զհողն եւ զմոխիր ի վերայ գլխոյն. եւ զամենայն զոր ինչ եւ կամէր՝ առնէր չարիս Հայոց. եւ ոչ ոք իշխէր ասել քան ինչ կամ գրոյց, զի առաւել եղեւ սա հակառակ

6, Մարտի 15, էջ 88 ծնթ.: Անհնար չէ, որ այդ «տղահասակ ոմն»ի կազմած գրացանկը պահպանուած լինի վատիկանի արխիւներում:

Հայոց ֆան գՊօղ էրէցն եւ գուրացողն Վասակ. եւ այս ամենայն վասըն ծովացեալ մեղաց իմոց. վա՛յ ինձ»⁹:

Նոյնպիսի համառօտ տեղեկութիւն կայ «Վիպասանութիւն նիկոլական» անունով Հ. Ղեւոնդ վ. Ալիշանի տպագրած՝ սկզբից եւ վերջից թերի չափածոյի մէջ, որի հեղինակն ըստ Ակինեանի նոյն Սիմէոն Լեհացին է¹⁰. Ըստ այս բնագրի՝ Նիկոլը «Յետոյ գամեն գրեանս ժողովեաց, / Որ ի գրատան էին պահած, / Աւետարանն ոսկով գրած, / Արծաթապատ կողով կազմած. / Անգիւտ գրեաննն որ Լով կային՝ / Սըսայ խագնիցն ելեալ էին, / Ագնիւ գրէր, Շարակնոցնին, / Յըրուեաց կորոյս գամենեսին»¹¹:

Յաջորդ վկայութիւնն առկայ է Առաքել Դաւրիժեցու նոյն՝ Ժէ. դարի կէսերին հիւսուած Պատմութեան մէջ. «Եւ ի մէջ (Լվովի Հաճաթկատար Ս. Աստուածածին – Գ. Տ-Վ.) եկեղեցւոյն կայր գանատուն, եւ ի նմա գիրք եւ անօթ յոյժ բազում, գրեանն աւելի ֆան գի. (1000) փերթ. ամենեքեան ընտիրք եւ պատուականն եւ վարդապետականն, յորս էին ոսկետուփ Աստուածաշունչն եւ Աւետարանն, եւ Շարակնոցն եւ այլ գրեանն բազում: Սոյնպէս եւ անօթ, սկիիք եւ խաչք, քոցք եւ բուրվառք, կանթեղք եւ աշտանակք, շուրջառք եւ եմփիորոնք, թագք եւ վակասք, սուրք նշանք եւ սրբոց նշխարք, եւ որ ի հարց եւ ի հաւուց ի վաղեմի եւ ի նախկին թագաւորաց ունէին մուրհակք եւ նոմոսք, եւ այլ եւս ինչ յոյժ բազում.

9 Մաշտոցեան Մատենադարանի ձեռ. Հ^ա 1004. ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՅԻ, *Մեկնութիւն Հնգամատենին*, Լէվ, ՌՁԵ.՝ 1636, էջ 193ա: Գիտենք շատ ընդարձակ այս յիշատակարանի առնուազն չորս տպագրութիւն. 1. Ա. ԿԻՆԵԱՆ, Հ. Ն., *Սիմէոն Դպրի Լեհացւոյ երկու յիշատակարանն*, ի «Հանդէս ամսօրեայ», 1936, Դ.-Զ., 246-258: 2. *Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանն*, Ռսումնասիրեց եւ հրատարակեց Հ. Ներսէս վ. Ակինեան, Միսիթ. տպ., Վիեննա 1936, 399-420 (Ազգ. մտնդր. ձեռն. 3): Հայերէն ձեռագրերի Ժէ. դարի յիշատակարաններ (1621-1640), հտ. Բ., Կազմեցին Վազգէն Յակոբեան - Աշոտ Յովհաննիսեան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրտ., Երեւան 1978, 647-654: 4. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Դ., «Նայիրի» հրտ., ԵՊՀ հրտ., Երեւան 2008, 15-24:

10 Ակինեանը նաեւ կարծում է, որ Սիմէոն Լեհացու հեղինակած այս չափածոյ գրութեմը ինչ որ ձեռագրից անջատուած յիշատակարան է, որի սկիզբը եւ վերջը մնացել են մոյն ձեռագրի մէջ. տե՛ս ՍԻՄԵՈՆ ԼԵՀԱՅԻ, *Ուղեգրութիւն*, 402-403:

11 *Կամենից*, 214. «Բազմավէպ», Ժ (1852), թիւ 6, էջ 88 ծնթ.:

սոքա ամենեքեան ի մէջ եկեղեցւոյն էին՝ ի նոյն գանձատանն, զորս գրաւեաց ընդ իւրով իշխանութեամբն Նիկոլն: Ոչ միայն գայս եկեղեցիս՝ այլ եւ գայլ եկեղեցիսն եւ զվանօրայսն, որ ի քաղաքին, եւ որք շուրջ զքաղաքան էին. եւ զամենայն աւանդս նոցա, գտունս եւ զանդաստանս, զաղօրիս եւ զխանութս, կալաւ եպիսկոպոսն ընդ իւրով իշխանութեամբն՝ ասելով. Ես եմ եպիսկոպոս, իմ են եկեղեցիք ամենեքեան եւ աւանդք իւրեանց»¹²:

Նոյն Նիկոլի չարագործութեան մասին քիչ անց Դաւրիժեցին չարունակել է հետեւեալը. «Եւ Նիկոլ եպիսկոպոսն եւս դարձաւ ի Հոռմայ եւ եկն յիւով քաղաք. եւ կայր ըստ առաջին վարուց իւրոց, եւ եւս առաւել անառակ: Եւ զվերոյասացեալ գրեանսն, եւ զսրբութեան անօթսն, եւ զամենայն աւանդս եկեղեցւոյն, զորս վանառեաց եւ զորս կաշառս բաշխեաց, եւ զորս ձեռամբ հրէից խորտակեալ արար արծաթ եւ վանառեաց. եւ զայնման գրագում եւ զանթուրի զինչսն եւ զգանձսն ցիր եւ ցան արարեալ, բնաւին վատնեաց՝ որ ոչինչ մնաց, միայն լոկ դատարկ քաղաք եկեղեցիսն, զի կեայր անառակ եւ զեղիս եւ շուայտ վարով՝ յայտնի եւ համարձակ յոչ ումեքէ վնեւերելով: Եւ բազում գրեանք եւ անօթք ի նորին վանառելոցն եկին յերկիրս Հայոց՝ եւ առ մեզ հասին. զորս վանառականք գնով առեալ բերին, որ սփանչելի էր տեսողացն»¹³:

Յաջորդը Հ. Մինաս վ. Բժշկեանի՝ մեր խնդրի համար կաթեւոր այս ուշագրաւ հաղորդումն է. Լվովի «Կանոնիկոսարանն է բնակարան նախապատիւ քահանայից, պարսպապատ բարձր եւ քաղէն, քաժանեալ յերկուս շինուածս. ստորին մասն եռայարկ կառուցեալ է ի վերայ ստորին փողոցի: Աստ է գրատունն բազում գրչագիր եւ տպագրեալ մատենից Հայոց եւ այլոց ազգաց, ուրանօր յանձնեցաւ մեզ ամսօրեայ ժամանակաւ խուզել զգրչագիր մատենան, յորս գտաք զերիս անգիւտ մատենան, եւ ընկալաք ի պարգևի մա-

12 ԱՌԱՔԵԼ ԴԱԻՐԻՇԵՑԻ, *Գիրք պատմութեանց*, Աշխտ. Լ. Ա. Խանկարեանի, Երևան 1990, 302:

13 Անդ, 307: Այս դէպքերի անդրադարձ տե՛ս ՕՐՄԱՆԵԱՆ, Մ. ԱՐՔԵՊՍ, *Ազգապատում*, հտ. Բ., Կ. Պոլիս 1914, 2413-2414, յօդ. 1661: Եւ իսկապէս՝ ներկայիս Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրական հաւաքածուի մէջ բաւական շատ են լեհահայոց միջավայրում եւ յատկապէս Լվովում գրուած՝ փոքր թուերով գոյնահամար ունեցող ձեռագրերը, որոնք ամենայն հաւանականութեամբ էջմիածին են հասել նոյն Ժէ. դարի առաջին կէսին:

սին ի յաւերժական յիշատակ ուխտիս սրբոյն Ղազարու ի Վենետիկ. **ա.** Ճառք Փիլոնի իմաստասիրի գրեալ ի վերայ մագաղաթի սակս Բ. Հեթմոյ թագաւորին Հայոց¹⁴. գայս գործ թարգմանեալ ի լատին ըստ մասնեայ տպագրեցաք հյ. լտ. յամի 1822¹⁵. եւ գառաւելագոյն մասն ի 1826¹⁶: **բ.** Հին թարգմանութիւն Դիոնեսիոսի Արիսպագացոյն ընտիր եւ անքերի¹⁷: **գ.** Մեկնութիւն Կաթողիկեայց Սարգսի Շնորհալւոյ մեծադիր եւ անխալ¹⁸. թող գայլս: Աստ էր եւ գանձատունն քաշէն ամփոփեալ կրկին դրամքք, որոյ վերակացու է մի ի նախապատիւ կանոնիկոսաց, ուր գոյր յառաջն գլուխ դրամոց 30 հազար ոսկի, այլ այժմ հազիւ լինի 3 հազար՝ որ բերէ զշահ սակս ողորմութեան պատարագի»¹⁹:

14 Վենետիկի Մխիթ. ձեռ. Հ^թ 1040/1668. Փիլոն Ա., ԶԽԵ.-1296, 636 էջ, մագաղաթ – *Վենետիկի ցուցակ*, Ը., 587-596: Այստեղ եւ այսուհետեւ Մխիթարեանց Վենետիկի ձեռագրերի համարները գրում ենք կոտորակաձև՝ նախ գոյգհամարները, ապա՝ թեք (/), յետոյ՝ ձեռագրացուցակի համարները:

15 *Փիլոնի Ներայեցւոյ Բանք երեք ձեռ ի լոյս ընծայեալք. Ա. Բ. Յաղագս նախախնամութեան, Գ. Յաղագս կենդանեաց. Ի հին թարգմանութենէ եղևոյ ի Յոյն բնագրէ ի ձեռն սրբոց թարգմանչաց մերոց, յեղևոյ ի Լատին քարքառ, աշխատասիրութեամբ Հ. Մկրտիչ վ. Աւգերեանց, Բ. տիտղթ. Philonis Judaei Sermones tres hactenus inediti. I et II De providentia, et III De animalibus* (հայ. եւ լատ.), Ս. Ղազար, Վենետիկ 1822:

16 *Փիլոնի Ներայեցւոյ Մնացորդք ի Հայս, որ են՝ Մեկնութիւն Մննդոց եւ Նիյց, ճառք ի Սամփսոն, ի Յովնան եւ յերիս մանկունս կամ ի հրեշտակս. Ի հին թարգմանութենէ եղևոյ ի Յոյն բնագրէ ի ձեռն սրբոց թարգմանչաց մերոց յեղևոյ ի Լատին քարքառ, աշխատասիրութեամբ Հ. Մկրտիչ արքուական վարդապետի Մ. Աւգերեանց, Բ. տիտղթ. Philonis Judaei Paralipomena Armena in Latinum fideliter translata P. Jo. Baptistam Aucher* (Հայ. եւ լատին.), Ս. Ղազար, Վենետիկ, 1826:

17 Վենետիկի Մխիթ. ձեռ. Հ^թ 1463/1531. Դիոնեսիոս Արիսպագացի Գ., ՊԺԱ.-1362, 345 թերթ, թուղթ – *Վենետիկի ցուցակ*, Ը., 181-186:

18 Վենետիկի Մխիթ. ձեռ. Հ^թ 117/1344, Սարգիս Շնորհալի Բ., ԶԽԶ.-1317, 512 թերթ, թուղթ – *Վենետիկի ցուցակ*, Ե., 633-646: *Փիլոնը եւ Սարգիս* գիրքը Զօհրապեանը 1791ին տարել է Վենետիկ, ընդօրինակել եւ վերադարձրել. տե՛ս *Վենետիկի ցուցակ*, Ե., էջ Թ., իսկ Հ. Միմաս վ. Բժըշկեանն այս նուէրներն ստացել է 1820ին:

19 ԲԺՇԿԵԱՆ, Հ. Մ., *Համապարհորդութիւն ի Լեհաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի Հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին*, Ս. Ղազար, Վենետիկ 1830, 100 (424 էջ):

Ժամանակ անց Ալիշանը, քննել է Ստեփանոս Ռոչքայի Հայ-Լատին եւ Լատին-Հայ բառարանների աղբիւրները եւ նախ եզրակացրել, որ նրանք Նոր Հայկազեան բառարանից հինգ հազար բառ աւելի ունեն, ապա կարծել է, որ Ռոչքայի բառարանների աղբիւր են եղել Անիի եւ Սսի ունեւոր Հայերի Լեհաստան տարած գրքերը, որոնք, ըստ Դաւրիթեցու հաղորդման՝ Նիկոլը «ցրուեաց եւ վաճառեաց», «բայց եւ յետ ևորա գտանէին մնացորդի ոչ սակաւ, յորոց եւ յիսնիւ չափ յետ հարիւր եւ աւելի եւս ամաց մահուան Ստեփանոսի փոխադրեցան այսր ի մերս քանգարան: Արդ, եւ ի սոցանէ օգտեցաւ Ստեփանոս որպէս ինձ քուի, եւ արար գերկհատոր բառարանն Հայ եւ Լատին եւ Լատին եւ Հայ»²⁰:

Մխիթարեան շատ միաբաններ են գործել Արեւելեան Եւրոպայի տարբեր մասերում²¹. Նաեւ՝ իրենց գործունէութեան վայրերից ձեռագիր ու տպագիր շատ գրքեր են տեղափոխել Վենետիկի եւ Վիեննայի իրենց վանքերի մատենադարաններ, որոնց ձեռագրապահներում արձանագրուած են ձեռագրերի այդ իրական փրկութիւնները: Վիեննայի մատենադարանի եռահատոր ցուցակի նկարագրութիւնների «Տեղեկութիւնք» հարցերի պատասխանների հիման վրայ արժէ հիւսել հաւաքածուի պատմութեան նոր՝ առաւել ամբողջական շարադրանք, որի մէջ յստակ կ'երեւայ նաեւ ձեռագրերի՝ Արեւելեան Եւրոպայից ստացուած մասը, իսկ Վենետիկի հաւաքածուի գոյացման մի համառօտ ուրուագծում արել է Հ. Բարսեղ վ. Սարգիսեանը²², աւելի նորերս գլխաւորապէս դիւանական նիւթերի հիման վրայ մեր վաղամեռիկ բարեկամ Հ. Սահակ վ. Ճեմճեմեանը հիւսեց Մխիթարեանց Վենետիկի մատենադարանի հաւաքածուի ստեղծման 1700-1850 չրջանի պատմութիւնը²³:

20 [Ա.ԻՇԱՆ], Հ. Ղ. Մ., *Ճառ ընթերցեալ ի Հայկական ճեմարանիս. Տեսութիւն ի Գանձ լեզուին հայոց կամ Ստեփանեան բառարան, ի «Բագմաւէպ», Ժ (1852), քիւ 6, 88:*

21 Նրանց աշխատանքի պատմագիտական կարեւորագոյն արդիւնքներից են՝ Հ. Միմաս վ. Բժշկեանի յիշուած գիրքը, նաեւ՝ ՔՈՒՇՆԵՐԵԱՆ, Ք. Վրդ., *Պատմութիւն գաղթականութեան Խրիմու հայոց. Ա. Ճանապարհորդութիւն ի Նոր Նախիջևան, Բ. Պատմութիւն Թէոդոսիոյ, Գ. Ռխտագնացութիւն ի Կամենից, տպ. Ս. Ղազար, Վենետիկ 1895, 236 էջ:*

22 Վենետիկի ցուցակ, Ա., էջ ԺԲ-ԺԴ:

23 Վենետիկի ցուցակ, Դ., էջ Ա-ԽԷ., Ե., էջ Բ.-ԺԸ., Զ., էջ Դ.-ՁԱ.:

Նրա շարադրանքի մէջ, բնականաբար, առկայ են մեր խընդրոյ առարկայ բնագրի ստեղծման նախընթացին վերաբերող փաստեր. Մխիթարեան «միաբաններէն Հ. Սահակ Խաչատրեան, 1756ին այցելած էր Լվով եւ նկարագրած հոն տեսած Զեռագիրները. “Տեսի ի Դատաստանատունս Հայոց ի հայ լեզու մեծամեծ գիրք Դատաստանաց... եւ գրեանք Բառից, Գիրք մարդկային բնութեան, արարեալ Գրիգորի Նիւսացոյն. մէկ Ճաշոց ձեռագիր, մէկ Աստուածաշունչ ձեռագիր, մէկ Այսմաւուր ձեռագիր, մէկ Քարոզգիրք Յօհաննէս Պուզիմ եւ այլ բազում գրեանք հայոց անքիւ” ... շուրջ բաւ տարի յետոյ, 1775ի ատենները, վանքիս հիւր եղած է Տէր Մարկոս Նիգոռովիչ լեհացին, Լվովէն, եւ տեսնելով վանքին մէջ պատրաստութիւնը Նոր Հայկազեան Բառարանին, յայտնած է թէ Լվովով կը գտնուին ընտիր Զեռագիրներ»²⁴: Գիտենք, որ այդ ժամանակ Նոր Հայկազեանի պատրաստման հիմնական պատասխանատուն Հ. Յ. վ. Զօհրապեանն էր, ուստի, Տէր Մարկոսի բարեացակամ օժանդակութեան յոյսով, միաբանութիւնը հէնց նրան ուղարկեց Լվով: «Հ. Յովհաննէս վանքէն կը մեկնի 17 Մայիս 1790ին, եւ կ'անցնի հետեւեալ փառաբաններէն. Թրիեստ, Վիեննա, Լեմպտոկ՝ այն է Լվով, Կամենից, ապա Վիեննայի մէջ ծանր կերպով հիւանդանալով՝ կ'ուշանայ Վենետիկ վերադարձը: Հ. Յովհաննէս Վենետիկ կը մտնէ 27 Սեպտեմբեր 1791ին, «ի բարեօք կարենոր մատենից» կը շարունակէ վանքիս ժամանակագիրը»²⁵:

Վենետիկի վանքի Տարեգրութեան եւ Զօհրապեանի գրած նամակների հիման վրայ Հ. Ս. Ճեմճեմեանը հիւսել է նրա ուղեւորութեան եւ ստացած արդիւնքների իսկապէս հետաքրքրական պատկերը, ապա թուարկել է Լվովից նրա տարած քսաներկու ձեռագիր եւ տասնչորս կոնդակ, նոյն Լվովում օրինակել տուած՝ «լատիներէն լեզուով... Հայոց համառօտ մէկ Կանոնագիրքը (Զեռ. 2415)», Լվովից վերադարձի ճանապարհին «Հոռտենգայի»՝ ներկայիս Ուկրայինայի Իվանովո-Ֆրանկովսկ մարզի Կոլումենսկի չրջանի Գորոդենկա քաղաքի «Տէր Գրիգոր Հոռպաս»ից նուէր ստացած Հ՞ր 16/97 Աւետարանը²⁶, յետոյ՝ 1794 դեկտ. 25ին Պոլսից Վենետիկ տարած եօթ ձեռագիր²⁷. այսպէս թուարկել է Զօհրա-

24 Վենետիկի ցուցակ, Դ., էջ ԻԶ.-ԻԷ.:

25 Նոյն տեղում, էջ ԻԷ.:

26 Կիլիկեան մանրանկարչութեան ընտիր նմուշ. նկարագրութիւնը տե՛ս Վենետիկի ցուցակ, Ա., 431-438. Դրագարկ վանք, ԶԶ.=1331, գրիչ՝ Թորոս Հոռմկլայեցի, ծաղկող՝ Սարգիս արեղայ:

27 Անդ, էջ ԻԷ.-Լ.:

պեանի շնորհիւ Վենետիկի Մխիթարեան մատենադարանի ստացած 31 ձեռագիր եւ 14 կոնդակ:

Իրօք այս փաստերի իմացութիւնը հնարաւոր դարձրեց պատշաճ ձեւով հրատարակելու Ֆրանսիայի Ազգային գրադարանի Հայերէն Հ^ր 294 (Arménien 294) ձեռագրում առկայ՝ 1791 թուականի Հ. Յովհաննէս վ. Զօհրապեանի կազմած Լվովի հայերէն ձեռագրերի ցուցակը, որ նոյն գրադարանը վերջերս համացանցով մատչելի է դարձրել «Yovhannes Zohrapean. Catalogue des manuscrits... c. 1820» խորագրով²⁸:

ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ
ԳՐԱԳԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ Հ^ր 294 ԶԵՆՈՒԳՐԻ

(Bibliothèque nationale de France, Département des Manuscrits,
Arménien 294)²⁹

1791, 1793, 1800ի շուրջ, 1827ից յետոյ, տեղի՝ Լվով, Պոլիս, Վենետիկ, Փարիզ, գրիչ՝ Հ. Յովհաննէս վ. Զօհրապեան, 39 թերթ (չգրուած՝ 14ր, 15ր, 18ա-23ր, 37աբ, 39ր), թուղթ (հինգ տեսակ), 23x16 սմ: Պրակք՝ Ա14, Բ8, Գ15, Դ1, Ե1 (վերջին երկուսը ներդիր): Միասիւն, երկսիւն (16ա-19բ), բոլորգիր եւ նորագիր, 1-39 տող: Կազմը՝ ստուարաթղթէ միջուկով ծաղկաթուղթ (պատրաստուած գրադարանում): Պահպանակ՝ Ա-Գ+Ե-Զ: Գրադարանը 1834 Յունիսի 14ին ստացել է Վիվիէն տը Սէն Մարտէնից:

28 Տե՛ս <https://gallica.bnf.fr/ark:/12148/btv1b525026975/f1n92.pdf?download=1%20https://gallica.bnf.fr/ark:/12148/btv1b525026975/f1.image.r=Arm%C3%A9nien%20manuscrit%20294> (1 Մայիսի 2022):

29 Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque nationale, par Frédéric Macler, Paris, Imprimerie nationale, MDCCCXVIII – 1908, p. 152. Թուագրումը՝ ԺԸ.-ԺԹ. դարեր: Նաև՝ *Manuscrits arméniens de la Bibliothèque nationale du France*, Catalogue, [par] Raymond H. Kévorkian - Armén Ter-Stepanian, Avec le concours de Bernard Outtier et de Guévorg Ter-Vardanian, Bibliothèque nationale du France / Fondation Calouste Gulbenkian, Paris 1998, col. 871-872. սխալ են թուագրումը եւ տեղին՝ «c. 1820»՝ 1820ի շուրջ, «lieu: Paris»: Անշուշտ, մեր նկարագրութիւնը սրանցից էականօրէն տարբեր է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ³⁰

3ա-5ա Յանկ Ա. Ճառընտրին – Վարք սրբոյն Անթիմոսի հայրապետին (կցկտուր)... ՃԻԸ. Յոհաննու Ոսկերեանի Ներբողեան պատմագրաբար ի սուրբն Գրիգոր Հայոց Լուսաւորիչն, ասացեալ յաքսորանաց ի Կոկիսոն Հայոց, ի խնդրոյ ումեմն եպիսկոպոսի Հայոց³¹:

5ա-7բ Յանկ Բ. Ճառընտրին – Ներբող ի սուրբն Ստեփաննոս Նախավկայն. Աթանասի հայրապետին. պակասաւոր. ՃԲ. եւ Ե. ՄՁԷ.: ԻԳ. Ներբող ի սուրբն Ստեփաննոս Նախավկայն՝ ասացեալ Պրոկղի եպիսկոպոսի. ՃԳ. (գոյ Ե. ՆՁԴ.)... ՋՂԵ. Վկայաբանութիւն Վահանայ Գողթն[ացւոյ]³²:

7բ-11ա Յանկ Գ. Ճառընտրին – 1. Ի մեծի աւուր ճրագալուցի որ է յունվարի ամսոյ ի հինգն. Եւ է սկիզբն տօնից երանելոյն Ստեփանոսի եպիսկոպոսին Մծբին քաղաքին Խաւսք յԵրուսաղէմ... 1273. Ի նոյն խորհուրդ տեսիլ մի եւ Խոճկորիկ. ՆԺԸ.³³:

11ա-12բ Յանկ Դ. Ճառընտրին – Վարդանանց պատմութիւն պակասաւոր. իա. Վասն կիրակէի պատուիրանին... նճբ. Թէոփանոսի եւ աղախնոյն Աստուծոյ³⁴:

- 12բ Ծնթ. Յ. վ. Զօհրապեանի. «Այս է ցանկ եւ ցուցակ չորից երեւելի ճառընտիր ասացեալ մատենից, որք գտանին ի Վեմետիկ, ի կղզի Սրբոյն Ղազարու հայոց վարդապետաց, յայլ եւ յայլ ժամանակս ի գանազան անձանց բերեալ անդր, ընդ այլ բազմապատիկ գրեանց՝ ի թիւ ութն հարիւր»:

15ա, 16ա-17բ Յանկ Ճառընտրին եղելոյ ի Թըրեստեան վանսն – /16ա/ Ա. աւուր ծննդեան. Աստուածասիրի ուրումն Թաղէոսի գիտնականի եւ արդիւնականի ասացեալ ներբողեան գովեստ ի սուրբ Աստուածածինն եւ ի միշտ կոյսն Մա-

30 Մեր հրապարակման բնագրերը (1ա-2բ, 13աբ) այստեղ չենք թուարկել:

31 Վեմետիկի Մխթ. ձեռ. Հ^մ 17/200. ՈՀԳ.-1224 ք, Վեմետիկի ցուցակ, Բ., 4-36. պարունակած միւթերի քանակը 117 (ոչ ձԻԸ.՝ 128):

32 Վեմետիկի Մխթ. ձեռ. Հ^մ 1014/201. ԺԲ-ԺԳ. դդ., Վեմետիկի ցուցակ, Բ., 35-63:

33 Վեմետիկի Մխթ. ձեռ. Հ^մ 512/202. ՌՁԶ.-1637, Երուսաղէմ, գրիչ՝ Մըկըրտիչ Ղազարեանց, Վեմետիկի ցուցակ, Բ., 68-112:

34 Վեմետիկի Մխթ. ձեռ. Հ^մ 985/203. ԺԳ. դար, գրիչ՝ Կիրէդ, Վեմետիկի ցուցակ, Բ., 115-131:

րիամ... Խօսք սրբոյն Պանդելեոնի քահանայի եւ գիւտ մատին սրբոյ առաքելոյն Պետրոսի՝ եթէ զհարդ եղեւ կատարումն եւ կամ որպէս բերաւ ի Հայք³⁵:

24ա-36բ Այբուբենական համառօտ ցուցակ ձեռագրաց մերոց՝ քաղեալ յՀնդարձակ ցանկէ (1792. ՌՄԽԱ.) – Աբուսայիդայ Մարդակագմութիւն. Ա. օրինակ նոր... Ֆրա Մարթին, որ եւ Փոյաք պատմիչ ասի. թարգմանեալ ի լատինէ ի ձեռն Ներսէսի Պալիենց՝ յաւելուածով պատմութեանց ժամանակին իւրոյ. Դ. ո՛չ հին³⁶:

38աբ Խորագիրք գլխոց Սեբերիանոսին են սոքա – Ա. ի մեծի աւուր ճրագալուցին երանելոյն Սեբիանոսի Եմեսու եպիսկոպոսին, խօսեցեալ յԵրուսաղէմ, վասն հաւատոյ ի Հօրէ ծննդեանն... Ժ. Նորին սրբոյն Սեբերիանոսի առ հրաւիրեալ ի մկրտութիւն. Ո՛ր զի իմաստուն էր Սողոմոն, ըստ իրս աշխարհիս կենաց՝ զժամանակս յայտնի արար³⁷:

35 Վիեննայի Մխիթ. ձեռ. Հ^ա 1 եւ 2. Ժ. զար (1506ից առաջ), Լեհաստան, գրիչ՝ Ստեփանոս. հմմտ. *Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա*, Կազմեց Հ. Յակովբոս վ. Տաշեան՝ Մխիթ. ուխտեմ, Վիեննա 1895, հայերէն մասի էջ 1-13: Յայտնի չէ, թէ Վիեննայի մատենադարանը որտեղից է ստացել այս ձեռագիրը, բայց գրչութեան վայրը հարցականով «Լեհաստան» համարելը ենթադրել է տալիս, որ պէտք է տարած լինեն Լվովից, որտեղ եւ երևի Հ. Յ. վ. Զօհրապեանն իմացել է այդ ձեռագրի գոյութեան մասին. Լվովից Վենետիկ վերադառնալուց (1791 Սեպտ. 26) ամիս չանցած՝ Հոկտ. 20ին այս ձեռագիրն ստանալու կամ գոնէ նկարագրելու խնդրով նա մամբան ցուցումներ է գրել Միքայել վ. Չամչեանին. տե՛ս *Վենետիկի յուցակ*, Դ., էջ Ի.: Ըստ այսմ՝ Վիեննայի ձեռագրի բովանդակութեան այս ցանկը հնարաւոր է լինի Չամչեանի արածի ընդօրինակութիւնը: Իսկ սրա հետ միասին նաեւ Վենետիկի Ա.-Դ. Ճառքնոսիրների ցանկերը Զօհրապեանը կազմել է գուցէ եւ նաոերի ժողովածու հրատարակելու նպատակով:

36 Համառօտումն օրինակութիւնն է Հ. Մկրտիչ վ. Աւգերեանի հեղինակած յայտնի գոյամատենան-ձեռագրացուցակի, որ կազմուելու 1791ին: Յետոյ պարբերաբար լրացուել-ճշգրտուել է: Զօհրապեանի այս փառածու օրինակը կարող է օգտակար լինել որոշ նկարագրութիւնների հետ կապումն հնարաւոր խնդիրներ պարզելու համար: Աւգերեանի այդ ցուցակի մասին տե՛ս *Վենետիկի յուցակ*, է., էջ Բ.-Ե. նոյն ցուցակի առաջաբանը տե՛ս նոյն տեղում, էջ է., Թ.-Ժ.Ե.:

37 Հմմտ. *Սեբերիանոսի կամ Սեւերիանոսի Եմեսացոյ Գաբաղացոց եպիսկոպոսի նաոբ. ի հին թարգմանութենէ եղելոյ ի յոյն բնագրէ ի ձե-*

38բ «Գոյ եւ ճառ ինչ այլուր սրբոյ Սերերիանոսի եպիսկոպոսի ասացեալ ի մեկնութիւն այնր բանի Աւետարանին՝ Այր մի իջանէր յերուսաղէմէ յերիքով (Ղկ., Ժ. 30). յերրորդ կիրակէի»³⁸:

38բ «Զնորոգ տպեալ Ոսկերերանն տե'ս Հարանց 2 գինն»: «8 հատորքն տպեալք են. մի հատորին գինն է լիրէ 36»: «Գործք Եւագրի, Ճարտասանութիւն, երաժշտութիւն, Ելափիտէի Սաղմոս. *francye ji feretti*»:

39բ [Զափածոյ տապանագիր Թովմաս վ. Պուզախճեանի (1746–1793)]³⁹ – Սահման հողադարձ զարմիս աղամեան... զմաքուր պաղատանս ձեր խնդրուածոց:

Նկատի ունենալով յատկապէս պրակների պատկերը (Ա14 թ. 1–14, Բ8՝ թ. 15–22, Գ15՝ թ. 23–37, Դ1՝ թ. 38, Ե1՝ թ. 39) եւ ամէն պրակի թղթի տարբեր տեսակի լինելը, համոզուած ենք, որ գրադարանն այս ձեռագիրն ստացել է առանձին տետրերի, վերջին երկու թերթն էլ՝ թղթերի տեսքով, այսինքն՝ անկազմ, եւ այս ամէնը ի մի է կազմուել գրադարանում: Ըստ այսմ եւ ելնելով բովանդակած բնագրերից՝ 1ա–2բ եւ 13աբ էջերի (ներկայ հրապարակման նիւթը) գրչութեան ժամանակը համարում ենք՝ 1791, գրուած Լվովում, 39ա էջը՝ 1793, Պոլսում, 3ա–12բ, 15ա, 16ա–17բ, 24ա–36բ էջերը՝ 1800 շուրջ, Վենետիկում, 38աբ էջերը՝ 1827ից յետոյ, Փարիզում:

ոն սրբոց քարգմանչաց մերոց, յեղեալ ի լատին քարքառ ի ձեռն Հ. Մկրտիչ Աթոռակալ վարդապետի Մխիթարեան Աւգերեանց. Բ. տիտղթ. Severiani sive Seberiani Gabalorum episcopi Emesensis Homiliae nunc primum editae ex antiqua versione Armena in Latinum sermonem translatae per P. Jo. Baptistam Aucher (հայերէն եւ լատիններէն), Ս. Ղազար, Վենետիկ 1827 (xx, 447, 6 չհ.) էջ 2–401՝ հառժ Ա.–Ժ., որոնց խորագրերն ու սկզբընատողերն են փաղուած այս ցանկում: Իսկ նոյն տեղում՝ էջ 402–447 կան նաեւ հառժ ԺԱ.–ԺԵ.:

38 Սերերիանոսի կամ Սեւերիանոսի Եմեսացւոյ Գաբաղացւոց եպիսկոպոսի հառժ, Ճառ ԺԲ., 408–413:

39 Քանի մը ցիրուցան տապանագիրեր վննետկեան Մխիթարեան հայրերու, ի «Մեղու», 1927, յուլիսի 14, Հ^մ 7, 52 (անստորագիր): Հմմտ. ԱՊՐՈՅԵԱՆ, Ե. Վրդ., Պատմական ճշդումներ, ի «Բազմավէպ», ԶԷ (1929), Է–Ը., 247–251:

ԼՎՈՎԻ ՁԵՌԱԳՐԱՑՈՒՑԱԿԸ

|1ա| ՑԱՆԿ ԳՐՔՈՑ

ի նախնեաց հակազնեայ ազգին սրբոց հարց եւ վարդապետաց շարադրելոց, եւ պէսպէս նոյնոյ ազգին յոմնաջան գրչաց աշխատութեամբ ի լոյս ածելոց, եւ նախ քան զմտահաս լի-
նիլն, ի Դատաստանատան ազնուանուն ծերակոտաց Լէօպոլ-
սեցոց մինչեւ ցայժմ ի պահեստի մնացելոց

- Ա. Սարգսի վարդապետին Մեկնութիւն թղթոյն Կաթողի-
կեայց⁴⁰ Ս. Յակոբայ առաքելոյն: Գրեալ յամի Տեառն ՌՅԺԷ.
(1317)⁴¹ եւ ի թուականութեան հայոց ԶԿԶ. (1317):
- Բ. Աւետարան Յիսուսի Քրիստոսի ըստ չորեցունց աւետա-
րանչացն Մատթէոսի, Մարկոսի Ղուկասոս եւ Յօհաննոս:
Յամն Տեառն ՌՈԽԴ. (1644) եւ հայոց ՌՂԳ. (1644):
- Գ. Ճաշու գիրքք երկուք: Գրեալ յամի Տեառն ՌՅԾԶ. (1356)
եւ հայոց ՊԵ. (1356). միւսոյն թուականութիւնն նուագէ:
- Դ. Յայսմաւուրք, որ է Պատմութիւն սրբոց հարց. զվարուց
նոցին եւ նահատակութենէ մարտիրոսաց: Թուականու-
թիւնն նուագէ:
- Ե. Փիլոնի խնդիրք եւ լուծմունք յաղագս երկբայանաց իրաց
Աստուածաշնչին: Գրեալ յամի Տեառն ՌՄՀԶ. (1276) եւ
հայոց ԶԻԵ. (1276):
- Զ. Աստուածաշունչ գիրք Հնոյ օրինաց, մինչեւ ցվերջն Մար-
գարէութեան Եգէկիէլի: Թուականութիւնն նուագէ:
- Է. Յիշելիք կանուխ ժամանակաց ապագայիցս ձեռագրու-
թեամբ աւանդեալք: Մանաւանդ յաղագս գաւառապետաց,
այսինքն՝ Պարոնաց Մօլտովու երկրին:

/1բ/

- Ը. Կարգ ձեռնագրելոյ յաստիճան եպիսկոպոսութեան: Թուա-
կանութիւնն նուագէ:
- Թ. Կարգ ձեռնագրելոյ յաստիճան քահանայութեան: Յամի
Տեառն ՌՇԻԲ.⁴² (1522) եւ հայոց ԶՂԱ. (1342):

40 Ձեռագրերի անունները գրել է բոլորգրով, մնացեալը՝ նոտրով:

41 Թուականների փակագծուած այս վերծանումները, բնականաբար, մերն
են:

- Ժ. Ժամանակագրութիւն Հնոյ օրինաց, նաեւ ճառ յաղագս ամուսնութեան: Թուականութիւնն նուագէ:
- ԺԱ. Իմաստասիրութեան ուսմունք Դաւթի փիլիսոփայի: Յամի Տեառն ՌՄԿԲ. (1262) եւ Հայոց ՁԺԱ. (1262):
- ԺԲ. Ժողովացի, որ է սկիզբն Պատմութեանց գրոցս Աստուածայնոց: Յամի Տեառն ՌԶԼ. (1730) եւ Հայոց ՌՃՀԴ. (1725)⁴³:
- ԺԳ. Գիրք Աղօթից Ս. Գրիգորի Նարեկացւոյն: Յամի Տեառն⁴⁴:
- ԺԴ. Գիրք որ ասի Հայելի վարուց:
- ԺԵ. Վարժումն կտակագրութեան:
- ԺԶ. Պատճառք Արարածոց, որ է Մեկնութիւն Մօսիսական գր[ոց]:
- ԺԷ. Կարգ թաղման հայրապետաց, եպիսկոպոսաց, քահանայից եւ ուխտի առաջնորդաց:
- ԺԸ. Պէսպէս պատարագք, զորս ասացեալ են նախնի սուրբ հարքն՝ Աթանաս, Ոսկերեանն, Կիւրեղ եւ Գրիգոր Մեծն:
- ԺԹ. Սաղմոս Դաւթի՝ ոտանաւորօք շարադրեալ:
- Ի. Բառգիրք հայկախօս եւ տաճկաբարբառ:
- ԻԱ. Մեկնութիւն Եսայեայ մարգարէին, արարեալ ս. Կիւրղի եպիսկոպոսի Աղէքսանդրացւոյ, նաեւ Եպիփանու եւ Ոսկերեանին:
- /2ա/
- ԻԲ. Պարապմունք ս. Կիւրղի Աղէքսանդրացւոյ յաղագս մարդանալոյ Միածնին:
- ԻԳ. Պէսպէս պատմութիւնք: Նաեւ Հարցմունք տաճկաց եւ լուծմունք քրիստոնէից:
- ԻԴ. Մեկնութիւն Դանիէլի մարգարէին, արարեալ Վարդանայ վարդապետին:

42 Քրիստոսի թուականն ակնյայտ վրիպակով է. երեւի ձեռագրում եղել է միայն հայոց թուականը, որի հիման վրայ փրկչականը մտովի եւ սխալ է հաշուել, ըստ այդմ՝ «ՌՇԻԲ»ն նոյնպէս մտովի «ՌՅԻԲ» ենթադրում եւ այդպիսով համապատասխանեցնում հայոց «ԶՂԱ.»՝ 1342 թուականին: Թէեւ ցանկի լատիներէն տարբերակում նոյնն է՝ «1522, 791»:

43 Կրկին՝ հայոց եւ փրկչական թուականների անհամապատասխանութիւն կայ:

44 Թուականը չգրած:

ԻՇ. Դիոնիսիոսի Արխագագուոյն Յաղագս Երկնայնոց քահանայապետութեանց:

INDICULUS LIBRORUM ARMENICALIUM⁴⁵

In Residentia, ab 𐌹⁴⁶ tabilium olim ac Nobilium Nationis Armenæ Judicum Leopoliensium, ab inde immemorabili ævo reperibilium.

- 1 Sergii Doctoris: Expositio Epistolæ Catholicæ S. Iacobi Apostoli scripta Anno Ævæ Domini 1317 Ævæ autem Armenæ 766.
- 2 Sanctum IESU Christi Evangelium secundum omnes Quatuor Evangelistas Mat thæum Marcum Lucam et Joannem: scriptum Anno æræ Domini 1644, æræ Armen: 1093.
- 3 Libri Epistolarum et Evangeliarum Choro applicabiles duo), quorum unus scriptus Anno 1356, [ææ Armenæ:]⁴⁷ 805, alterius vero æra incerta.
- 4 Martyrologium, seu vitæ Sanctorum, scriptum æra incerta.
- 5 Philonis: Quæstiones et Resolutiones ambiguitatum Sanctæ Scripturæ: 1276, [ææ Armenæ:] 725.
- 6 Sacra Biblia Veteris Testamenti usque finem Ezegielis Prophetæ æra incerta.
- 7 Antiquitates dignæ memoria, posteritati manu-notatione traditæ, singularius porro de rebus gestis Principum Moldavicorum æra incerta.
- 8 Ritus Ordinandi in Episcopatum æra incerta.
- 9 Ritus Ordinandi in Presbyteratum 1522, [ææ Armenæ:] 791.
- 10 Chronologia Veteris Testamenti, eodemque libello contenta Disputatio de Matri: monii Sacramento. æra incerta.

[2p]

- [11]⁴⁸ Dissertationes phylosophicæ Davidis Philosophi 1262, [ææ Armenæ:] 711.

45 Ցանկիս լատիներէն մասի վերծանութեան հշգրտութեան համար երախտապարտ ենք մեր բարեկամ Բեռնար Ուտիէին (Bernard Outtier):

46 Գրած-ջնջած մասերը վերարտադրում ենք այսպէս՝ ջնջագծով:

47 Այս մասում այս եւ յաջորդ դէպքերում փրկչական եւ հայոց թուականները նոյնութեան փակագծով՝ { գրել է իրար տակ, մենք [] փակագծերի մէջ լրացնում ենք [ææ Armenæ:] բառերը եւ շարունակում կանոնաւոր տողերով:

- [12] Collectanea Sacrae Scripturae, seu historica narratio expositione illustrata gestorum ab Orbe condito. 1730, [ærae Armenæ:] 1174.
- [13] Libellus Orationum S. Gregorii Narecensis.
- [14] Libellus intitulatus: Speculum Virtutum.
- [15] Exercitium Testamentorum, seu Methodus rite condendi Testamenta.
- [16] Origo Creaturarum, id est: Commentarius in Moysis Pentateuchum
- [17] Ritus Sepulturæ Patriarcharum, Episcoporum, Presbyterorum et Abbatum.
- [18] Variæ Liturgiæ a Sanctis Patribus, Athanasio, Chryzostomo, Cyrillo et Grego: rio Magno compositæ.
- [19] Psalterium David carmine rithmico explanatum.
- [20] Dictionariolum Armeno-Turcicum.
- [21] Commentarius in Isaïam Prophetam S. Cyrilli Alexandrini Episcopi, Epi-pha: nii item et Chryzostomi.
- [22] Lucubrationes S. Cyrilli Alexandrini de Incarnatione Unigeniti.
- [23] Variæ Narrationes, eodemque codice contenta Objecta Otthomanidarum et Re: solutiones Christi-fidelium.
- [24] Commentarium in Danielis Prophetiam Vartanis Doctoris.
- [25] Dionysii Aeropagitæ: de Archi-Sacerdotio Ecclesiæ Triumphantis.

[2բ] Այս գրեանքն են, զորս տէր Յովսէփ Մօշօրա նշանա-կեալ էր, բայց եւ վերիվայր յածեալ գտի եւ գայլս բազումս, յորոց 42 մանր եւ խոշոր բերի ի վեցեակի, ի Սուրբն Ղա-զար, եւ զորս ոչ կարացի ի պատուականացն ընտրելոց յիննն, են սոքա.

- [1].⁴⁹ *Սարգսի Մեկնութիւն կաթողիկեայց. անթերի, ամենամեծ դրիւք:*
- [2]. *Աւետարան. նովին ամենամեծ հսկայաչափ դրիւք:*
- [3]. *Աստուածաշունչ. ամբողջ, ոչ այնչափ հնագիր, օ-իւ գրուած:*
- [4]. *Փիլոնի գործ (զայս, յետ բազում վիճից, բերի եւ անդրէն յետս առաքեցի):*

48 Տարբեր տեսակների եւ չափերի թերթերն ի մի կազմելիս եզրահատման հետեւանով այս մասի արտաքին լուսանցի հետ կտրուել են ման բուարկման թուերը. լրացրել ենք փակագծուած՝ []:

49 Այս մասի համարները մենք ենք նշանակել:

- [5]. *Դիոնեսիոսի գործք, թարգմանութիւն Ստեփաննոսի Սիւնեցւոյ, հանդերձ Մեկնութեամբ հե///:*
- [6]. *Ե<ե>սայեայ Մեկնիչ՝ Գէորգայ. հին եւ ամբողջ, պատուական օրինակ:*
- [7]. *Ճաշոց ամբողջ (տարբեր յայնմանէ գոր բերի⁵⁰):*
- [8]. *Դաւթի Անյաղթի զանազան գործք իմաստասիրականք:*
- [9]. *Այս[մ]աւուրք, այսինքն՝ վարք սրբոց գորս տօնէ եկեղեցի հայոց. ընտիր ոճով, գլխովին տարբեր ի վ[երնոյն]:*
- [10]. *Պատարագամատոյցք զանազան հարց:*
- [11]. *Մեկնութիւն Հինգ գրոց Մովսէսի:*
- [12]. *Մեկն[ութիւն] Դանիէլի մարգարէի:*

[13ա] Ի 1791 ֆանապարհորդութեանս ի կողմանս Լեհացոց բաց ի ֆառասուն եւ երկու թուով հին եւ նոր գրչագիր մատենից, գոր ստացեալ բերի ընդ իս ի վեցնտիկ, ի կողմ Սրբոյն Ղազարու, նա եւ գրուն իմֆնագիր կոնդակս կաթուղիկոսաց Հայոց՝ 51 եւ գմուրհակս յիշատակարանաց, որոց ցուցակն է առաջիկայդ.

Ա. *Կոնդակ երկուց կաթողիկոսաց. Տէր Մեսրոպայ եւ Տէր Կոստանդեայ գրեալ առ Լէհացիս. բոլորագիր, մագաղաթեայ, տուեալ ի թվին ՊԺԳ. (1364), յուլի[սի]⁵², եւ Կոստանդեայն՝ ՊԻԳ. (1374) ի յունվարի 13⁵³:*

Բ. *Կոնդակ Տէր Թէոդորոս կաթողիկոսի, գրեալ առ Լէհացիս, բոլորագիր, մագաղաթեայ. թվին ՊԼԲ. (1383) յուլիսի 2⁵⁴:*

50 Հաւանաբար նկատի ունի առաջին ցանկի Գ. կէտի տակ նշած՝ ՊԵ.-1356 ճաշոցը:

51 Թուարկուած կոնդակների մեծ մասը տպուած են ի՝ Կամենից, նաեւ արձանագրուած եւ գոյփահամարներով թուարկուած են ի՝ *Վեցնտիկի ցուցակ*, Դ., էջ Լ., որից եւ վերցրել ենք կոնդակների գոյփահամարները:

52 Ամաթուրի տեղը բաց՝ չգրած: Միթիթ. Վեցնտիկի ձեռ. Հ^մ 3054: Տպագրուած՝ Կամենից, 5-8. ամաթիւր տպել է՝ «յունվի. Ժե.»:

53 Տպուած՝ Կամենից, 215-216:

54 Միթիթ. Վեցնտիկի ձեռ. Հ^մ 3061: Տպուած՝ Կամենից, 217-220. Ամաթիւր տպուած՝ «այրիլ 2»:

- Գ. Կոնդակ նորին Տէր Թէոդորոսի, գրեալ առ նոյնս, բոլոր[ա-
գիր], մագա[ղաթ], ուր յիշի առաջինն թվին ՊԼԷ. (1390), յօ-
գոստ. 18⁵⁵:
- Դ. Կոնդակ Տէր Յակոբ կաթողիկոսի, գրեալ առ նոյնս, բո-
լոր[ագիր], մագա[ղաթ], թվին ՊԾԸ. (1409) ի յունիսի 26⁵⁶:
- Ե. Կոնդակ Տէր Արիստակէս կաթողիկոսի, գրեալ առ նոյնս,
բոլոր[ագիր], բամպակաթուղթ, ոսկենկար պատկերօք, հնա-
ցեալ յոյժ, թվ. ԶԺԴ. (1468)⁵⁷:
- Զ. Կոնդակ Տէր Ստեփաննոսի կաթողիկոսի Սալմաստեցւոյ,
գրեալ առ նոյն Լէհացիս, թվին ԶՂԴ. (1547), նոյեմ. 15⁵⁸:
- Է. Կոնդակ տէր Մէլքիսէթ կաթողիկոսին հանդերձ ստորագ-
րուլթեամբ եւ կնքով այլ եւս հինգ եպիսկոպոսաց, նկարա-
պաճոյճ, բոլորգ", բամբակաթղթ, թվին ՌԾԹ. (1610), ի
մայի. 1⁵⁹:
- Ը. Կոնդակ նորին Տէր Մէլքիսէթ կաթողիկոսի, վասն եպիսկո-
պոսութեան Նիկոլի, բոլորագիր մագաղ. թվին ՌՀԵ. (1626),
ի դեկտ. 29⁶⁰:
- Թ. Կոնդակ Տէր Փիլիպպոսի կաթողիկոսի Սալմաստեցւոյ նօտր-
գիր, թղթեայ, թվին ՌԶԸ. (1639) ի հոկտ. 12⁶¹:
- Ժ. Կոնդակ նորին Տէր Փիլիպպոսի, նօտրգիր թղթեայ, թվին
ՌՃԲ. (1653) ի փետրվարի 10⁶²:
- ԺԱ. Կոնդակ նորին Տէր Փիլիպպոսի, նօտրգիր, թղթեայ, գրեալ
ի Կոստանդնուպօլիս, թվին ՌՃԲ. (1653), յապրիլ 15⁶³:

/13բ/

ԺԲ. Կոնդակ նորին Տէր Փիլիպպոսի, նօտրգիր, թղթեայ. թվին
ՌՃԲ. (1653), ի նոյեմբ. 5⁶⁴:

55 Մխիթ. վեցնտիկի ան. Հ^ար 3062: Տպում՝ Կամենից, 9-13:

56 Մխիթ. վեցնտիկի ան. Հ^ար 3058: Տպում՝ Կամենից, 221-224:

57 Վեցնտիկ, Ս. Ղազար, «ի քանգարանի»: Տպում՝ Կամենից, 225-227:

58 Մխիթ. վեցնտիկի ան. Հ^ար 3061:

59 Մխիթ. վեցնտիկի ան. Հ^ար 1887: Տպում՝ Կամենից, 239-240:

60 Մխիթ. վեցնտիկի ան. Հ^ար 1887:

61 Տպում՝ Կամենից, 244-246:

62 Տպում՝ Կամենից, 252-254:

63 Տպում՝ Կամենից, 255-256:

64 Կամենից, 250-252: Փիլիպպոս կաթողիկոսի այս չորս կոնդակի վերաբե-
րեալ կայ այս. «Բ.-ԺԲ. Փիլիպպոս Կթղս. 1653ին (Ձեռ. 3054, 3060)»:

ԺԳ. Կոնդակ Տէր Յակոբ կաթողիկոսի. նօտրգիր, թղթեայ, թվին ՌՃԺ. (1661), յունվարի 12⁶⁵:

ԺԴ. Կոնդակ Տէր Յակոբ կաթողիկոսի, նօտրգիր, թղթեայ, ոսկենկար զարդարանօք. թվին ՌՃԻ. (1671), յօգոս. 20⁶⁶:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ

Ա. Յիշատակարան շինութեան եկեղեցւոյն Իլվովայ յանուն Սուրբ Աստուածածնի. մագաղաթ բոլորգիր, թվին ՊԺԲ. (1363) եւ սպասուց յաւելլոց ի նմա թվին ԶԶԵ. [1536] եւ եւս ԶՂԳ. [1544]. եւլն⁶⁷:

Բ. Յիշատակարան շինութեան եկեղեցւոյն Սրբոյն Ստեփաննոսի ի Լուցքա, թվին ՊԻԵ. (1376):

Գ. Յիշատակարան Հաճաթկատար Աստուածածնի վանաց Իլվովայ, ի թվին ԶԺԱ. (1462)⁶⁸:

Եւ այլ եւս յիշատակարանք եւ հին մուրհակք մագաղաթեայք:

Գտի եւ ի Վենետիկ՝ յեկեղեցին հայոց Սրբոյ Խաչին կոնդակ մի Տէր Յակոբ կաթողիկոսի՝ գրեալ առ Վենէտկեցի հայս, ի թվին ՌՃԻԵ. (1678), յօգոստ. 20⁶⁹:

* * *

Այսպէս, Զօհրապեանի ցուցակն ունի երեք մաս.

1. Յանկ Ա.-ԻԵ. համարակալած 25 ձեռագրի (հայերէն եւ լատիներէն)՝ «ի Դատաստանատան ազնուանուն ծերակուտաց Լէօպօլսեցւոց մինչեւ ցայժմ ի պահեստի մնացելոց» – 1ա-2բ.

65 Մխթ. Վեցետիկի ձեռ. Հ^ար 3060: Տպուած՝ Կամենից, 257-258:

66 Մխթ. Վեցետիկի ձեռ. Հ^ար 3061: Տպուած՝ Կամենից, 259-262. Ամսաթիւը՝ Սեպտեմբերի 1: Անդ, 263-265՝ նոյն կաթողիկոսի 1672 Օգոստոսի 28ի մի այլ կոնդակ:

67 Մխթ. Վեցետիկի ձեռ. Հ^ար 3051:

68 Մխթ. Վեցետիկի ձեռ. Հ^ար 1912:

69 Այս կոնդակը եւս, քնակամարաբ, այժմ պետք է Ս. Ղազարում լինի:

2. Առանց համարակարման թուարկում 12 ձեռագրի, «գորս տեր Յովսէփ Մօշորա նշանակեալ էր», որոնք սակայն Վենետիկ տանել «ոչ կարացի ի պատուականացն ընտրելոց յիմէն»։ – 2բ.

3. «Զբուն ինքնագիր կոնդակս կաթուղիկոսաց Հայոց եւ գմուրիակս յիշատակարանաց»։ Կոնդակները Ա.-ԺԴ. թուարկումով, «յիշատակարանք»՝ Ա.-Գ. համարներով եւ յաւելումով. – 13աբ:

Վերջին ցանկի միաւորները տարել է Վենետիկ, իսկ առաջին երկուսի մէջ թուարկուածները ըստ ամենայնի Ս. Ղազար տանել չի կարողացել⁷⁰: Յիշենք՝ առաջինի Ա. եւ Ե. միաւորները՝ Սարգիս գիրքը եւ Փիլոնը Զօհրապեանն ըստ պայմանաւորուածութեան տարել է Վենետիկ, ընդօրինակել եւ վերադարձրել⁷¹. ըստ որում՝ Սարգիս գիրքը եւ Փիլոնը կան նաեւ որպէս երկրորդ ցանկի 1ին եւ 4րդ կէտեր, 4րդը՝ լրացուցիչ բացատրութեամբ. «յետ բագում վիճից, բերի եւ անդրէն յետս առաքեցի»։ Այս երկու ձեռագիրը 1820ին ստացել եւ Վենետիկ է տարել Հ. Մինաս վ. Բժշկեանը⁷²: Երեւի բացառութիւն է նոյն առաջին ցանկի Գ. համարի «Ճաշու գիրքի երկուք»ից առաջինը՝ 1356 թուականին գրուածը, որ տարել է Վենետիկ եւ որն այժմ Մխիթարեան մատենադարանի Հ^Ժ 904/603 ձեռագիրն է (տե՛ս ստորեւ), իսկ անթուական («թուականութիւնն նուագէ») Ճաշոցի⁷³ մասին դատելը դժուար է։ Նոյնական կարող են լինել նաեւ առաջին ցանկի՝ «ԺԶ. Պատմաոմ Արարածոց. Մեկնութիւն Մօսիսական գրոց» եւ երկրորդի 11ր՝ «Մեկնութիւն Հիմգ գրոց Մովսէսի», առաջինի ԻԴ. եւ երկրորդի 12ր՝ «Մեկնութիւն Դանիէլի մարգարէի»:

Զօհրապեանը երկիցս չեշտել է, որ Վենետիկ է տարել «քառասուն եւ երկու թուով հին եւ նոր գրչագիր մատենան» (13ա), «յորոց 42 մանր եւ խոշոր բերի ի վեցետիկ» (2բ). մինչ

70 Զօհրապեանի անունը նկատի չունենալով, ստուգել եւ վեցետիկի ձեռագրացուցակի հատորների մէջ չենք գտել առաջին երկու ցանկի միւս բոլոր ձեռագրերը, յատկապէս առաջինի Բ., Դ., Զ., Ը., Թ., ԺԱ. եւ այլն:

71 Վեցետիկի ցուցակ, Ե., էջ Թ.:

72 Անդ, ծմբ. 14, 17, 18:

73 Անթուական միայն երեք Ճաշոցի՝ Գ. (ԺԱ.-ԺԲ. դդ.), ԺԹ. (ԺԵ. դ.) եւ ԻԲ. (ԺԵ. դ.)՝ ստացմանը վերաբերող «Տեղեկութիւնք կը պակսին» – Վեցետիկի ցուցակ, Դ., 595-606, 753-760, 815-820. սա կարող է լինել երկրորդը կամ երրորդը:

Ճեմճեմեանն արձանագրել է Զօհրապեանի լեհական ուղեւորութիւնից ստացուած ընդամէնը 24 ձեռագիր՝ 22ը Լվովից, մէկը՝ Լվովում օրինակել տուած յատիներէն կանոնագիրքը, մէկը «Հոռոտնեգա» Գորողենկայից տարած՝ Սարգիս Պիծակի ծաղկած Աւետարանը: 42ի եւ 24ի տարբերութիւնը 18 է. վստահաբար չի հաշուել իր երրորդ ցանկի «կոնդակք»ը՝ 14 միաւոր եւ «յիշատակարանք»ը՝ 3 եւ անորոշ քանակի այլ յաւելումներ, որովհետեւ յստակ ասում է, որ սրանք տարել է՝ «քաց ի» 42ի: Իսկ սա նշանակում է, որ յիշեալ 18ը պէտք է փնտռել եւ գտնել Ս. Ղազարում, որովհետեւ ըստ մեր ունեցած տպաւորութեան՝ այնտեղ մտած ձեռագրերն այլեւս դուրս չեն գնում:

Հաշուեկշիռ՝ Զօհրապեանի առաջին ցանկում արձանագրուած է 25-3 (Ա, Գ1, Ե.) = 22, իսկ երկրորդում՝ 12-2 (1ին եւ 4րդ) = 10, ընդամէնը 32 ձեռագիր. սրանից պէտք է հանենք նաեւ երկու ցանկերում կրկնուած (ԺԶ.-11 եւ ԻԴ.-12) 2 միաւորը եւ եզրակացնենք, որ ըստ այս ցանկերի նա Լվովում տեսել, բայց Վենետիկ տանել չի կարողացել 30 ձեռագիր:

Թէկուզ Զօհրապեանի նկարագրութիւնները շատ համառօտ են, սակայն նրա գրացանկերի այդ 30 միաւորը յետագայում պէտք է փնտռել թէ՛ ընդհանրապէս Արեւելեան Եւրոպայի նախկին հայաբնակ վայրերում եւ թէ՛ Մխիթարեանց գոյգ մատենադարաններում, յատկապէս Վենետիկի հաւաքածոում, երբ վերջինիս ձեռագրացուցակը մի օր ամբողջանայ, եւ հնարաւոր լինի Լվովից 1820ին Հ. Մինաս վ. Բժշկեանի Վենետիկ տարած բոլոր 41 ձեռագրերի⁷⁴ տուեալների ու Զօհրապեանի ներկայ թուարկումների համեմատութեան հիման վրայ մի նոր ուսումնասիրութիւն անել: Ահա ապագայ այդ ստուգում-պրպտումների եւ ճշգրտումների դիւրացման, նաեւ՝ Զօհրապեանի լվովեան վաստակն ամբողջապէս պատկերելու նպատակով այստեղ գետեղում ենք Լվովից նրա Վենետիկ տարած ձեռագրերի ցանկը: Ճեմճեմեանն այս ձեռագրերը թուարկել է միայն ըստ խորագրերի եւ գոյքահամարների. թուերի աճի կարգով մենք եւս գրել ենք նախ ձեռագրերի գոյքահամարները, որոնց կպած թեքից (/) յետոյ, ըստ մեր սկզբունքի՝ ձեռագրացուցակի համարներն են, ապա՝

74 Վենետիկի ցուցակ, Ե., էջ Ը.: Ընդհանուր հաշուի ժամանակ պէտք է նկատի ունենալ նաեւ Ալիշանից վերն արուած քաղուածքում առկայ՝ երեւի շատ մօտաւոր կամ անհիշտ՝ «յիսնիւ չափ» քիւր. «Բագմավէպ», Ժ (1852), քիւ 6, Մարտի 15, 88:

եւրպէտային կարեւորագոյն տուեալները, վերջում՝ ձեռագրացուցակի հատորի եւ նկարագրութեան էջահամարները՝ «Ցուցակ է., 53-60»⁷⁵: *Ձեռագրացուցակի նկարագրութիւնների մէջ «Տեղեկութիւն» հարցի դիմաց միշտ գրուած է ձեռագրերի առաջին կազմաստաւին արձանագրուած համարեա միանման հետեւեալը. «Զայս մատեան ստացաւ գրատան վանացս Սրբոյն Ղազարու որ ի վեցնտիկ, վ. չ. Յովհաննէս Վրդ.ն մեր Զօհրապեան ի քանապարհորդութեան իւրում ի Լեհս, որ եւ եհաս յամի 1791, ՌՄԽ. ի սեպտեմբերի 26»:*

**ՑԱՆԿ 1791 ԹՈՒԱԿԱՆԻՆ ԼՎՈՎԻՑ Հ. Յ. Վ. ԶՕՀՐԱՊԵԱՆԻ
Ս. ՂԱԶԱՐ ՏԱՐԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ**

1. Ձեռ. 183/1211. Մեկնութիւն Ընթերցուածոց. Տօնապատմաւ Զ., ԺԴ. դար, 580 քերթ, թուղթ – Ցուցակ, է., 53-60:
2. Ձեռ. 193/325. Մաշտոց, ՈՀ.-1221 թ., 209 քերթ, թուղթ, գրիչ՝ Անտոն – Ցուցակ, Գ., 97-106:
3. Ձեռ. 254/1564. Կիրեղ Աղեփսանդրացի Բ., ԺԴ. դար, 196 քերթ, թուղթ, տեղի՝ գուցէ Տաթեւ – Ցուցակ, Ը., 291-296:
4. Ձեռ. 271/1339. Իգնատիոս վարդապետ Ա. Մեկնութիւն Ղուկայ, ՈՀԲ. – 1223 թ., 356 քերթ, թուղթ, եկեղեաց գու., գրիչ՝ Մոնումախ – Ցուցակ, է., 605-616:
5. Ձեռ. 444/940. Վարդան, Պատմութիւն, ԺԸ. դար, 258 քերթ, թուղթ, շղագիր, տեղի՝ Հռոմ կամ Լվով – Ցուցակ, Զ., 253-254⁷⁶:

75 Քանի որ այս եւ յաջորդ ցանկերում միշտ նկատի ունենմ վեցնտիկի Մխիթ. մատենադարանի ձեռագրացուցակը, յղումներում «վեցնտիկի» բառը չենք գրել:

76 Հայր Դեւոնդ Ալիշան, *Նամականի*, երեւ հատորով, հտ. Ա. (1840-1870), Աշխ. Հ. Վահան Վարդապետ Օհանեանի, Մխիթարեան Հրատարակչատուն, Երեւան 2020, 75-76: Ալիշանը 1848 Փետրուարի 4ին Հ. Ներսէս վ. Սարգիսեանին գրել է. «Այլ եւ ի լուսանցս շղագիր պատմութեան վարդանայ գոր Զօհրապեանն ի Լեհաց ածեալ է, գրի վասն Մխիթարայ Անցւոյ. «Սա է պատմիչն գոր ունի մեր արքեպիսկոպոսն»: Եթէ գուցէ յոյս տակաւին գտանել զայն անդ՝ ոչ մոռացայց յանձնել լեհացի պատանաց որ գնայցեն զայս ամ ի վարժարանէս, քննել եւ ստուգել»:

6. Ձեռ. 521/35. Սաղմոս, ԺԳ-ԺԴ. դ., 366 թերթ, մագաղաթ – Ցուցակ, Ա., 205-212:
7. Ձեռ. 641/100. Աւետարան, Ձե. – 1256 թ., 304 թերթ, թուղթ, գրիչ՝ Յոհաննես, տեղի՝ Կիլիկիա – Ցուցակ, Ա., 445-448:
8. Ձեռ. 654/1232. Գրիգոր Մաշկեւորցի, Ժողովածոյ ԺԵ., ԺԵ. դար, 205 թերթ, թուղթ – Ցուցակ, Է., 213-216:
9. Ձեռ. 835/916. Մատթ. Ուռհայեցի, ԺԷ. դար, 85 թերթ, թուղթ – Ցուցակ, Զ., 207-210:
10. Ձեռ. 904/603. Հաշոց Ը., ՊԵ. – 1356 թ., 496 թերթ, թուղթ, Սուրդաթ, գրիչ՝ Աստուածատուր ֆիյ - Ցուցակ, Դ., 675-718:
11. Ձեռ. 906/1360. Դաւիթ Քոբայրեցի, Մեկն. Կաթողիկեայց, ԶԼԷ.-1288 թ., 22 թերթ, թուղթ – Ցուցակ, Է., 693-696:
12. Ձեռ. 994/1406. Եսայի Նչեցի Ա., ԺԴ. դար, Քերական, Գլաճոր, գրիչ՝ Եսայի Նչեցի – Ցուցակ, Է., 831-834:
13. Ձեռ. 999/1366. Վարդան Արեւելցի Զ., Մեկն. Հնգամատենի, ԺԴ. դար, 222 թ., թուղթ, գրիչ՝ Միսիթար վրդ. – Ցուցակ, Է., 711-716:
14. Ձեռ. 1015/467. Շարակնոց, ԶԺԸ. – 1469 թ., 341 թերթ, թուղթ, գրիչ՝ Յովհաննէս երէց – Ցուցակ, Դ., 95-102:
15. Ձեռ. 1046/536. Շարակնոց Զ., ԺԴ. Դար, 167 թերթ, թուղթ, գրիչ՝ Ալեքսանոս ֆիյ, տեղի՝ Կիլիկիա – Ցուցակ, Դ., 383-388:
16. Ձեռ. 1094/502. Շարակնոց ԽԶ., 1632 թ., 343 թերթ, մագաղաթ, գրիչ՝ Յոհան երէց Լեհցի – Ցուցակ, Դ., 253-256:
17. Ձեռ. 1104/1074. Մեկնութիւն Ընթերցուածոց, Ներսէս Շնորհալի ԺԲ. եւ Ժողովածու, ԺԴ. դար, 582 թերթ, թուղթ – Ցուցակ, Զ., 669-676:
18. Ձեռ. 1112/1351. Միսիթար Գօշ Ա.՝ Մեկն. Երեմիայ, ԺԴ. դար, 250 թերթ, թուղթ, գրիչ՝ Խաչատուր – Ցուցակ, Է., 673-676:
19. Ձեռ. 1232/1220. Ժողովածոյ Գ. (Քերականական), ԺԳ. դ., 78 թերթ, թուղթ – Ցուցակ, Է., 129-136⁷⁷:
20. Ձեռ. 1239/717. Մանրումունք ԺԳ., ԺԴ. դար, 83 թերթ, թուղթ – Ցուցակ, Դ., 1113-1116:

77 Այս միաւորը ձեւմեմեանի ցանկում (*Վեցերկի ցուցակ*, Դ., էջ ԻԹ.) չկայ. մեմքն ցուցակը թերթելու ընթացքում:

8. Ձեռ. 1310/1058. Գրիգոր Նարեկացի Լ., ՌՄԽԳ. – 1794. Պոլիս, 94 էջ, թուղթ, գրիչ՝ Յ. վ. Զօհրապեան – Ցուցակ, Զ., 599-600:
9. Ձեռ. 1567/չնկարագրուած. Պատմութիւն Նատր Դուլիի, Թամպուոնի Յարութիւն, Հանապարհորդութիւն:
10. Ձեռ. 1626/104. Աւետարան ԺԸ., ԶԿԵ. – 1316 թ., 240 թերթ, թուղթ – Ցուցակ, Ա., 461-466:

* * *

Այսպէս, այստեղ հրատարակուած բնագր(եր)ի շնորհիւ Հ. Յովհաննէս վարդապետ Զօհրապեանի լվովեան «գործողման» արդիւնքն աւելի ամբողջական պատկեր ստացաւ. 1791 թուականին նա Լվովից Վենետիկ է տարել 42 «հիմ եւ նոր գրչագիր», որոնցից առնուազն 18ը կամ նրանց հետքերը դեռեւս պէտք է փնտռել եւ գտնել. տարել է նաեւ 17ից աւելի կոնդակ եւ յիշատակարան (իմա՝ Ընծայամատեան): Երեսուն ձեռագիր էլ տեսել է, բայց Վենետիկ տանել չի կարողացել. սրանց մի մասը մի այլ ուսումնասիրութեամբ պէտք է գտնել 1820 թուականին Հ. Մինաս վ. Բժշկեանի Լվովից Վենետիկ տարած ձեռագրերի մէջ, մնացած միաւորներն էլ պէտք է փնտռել այլ տեղերում:

Միով բանիւ, յստակուեց Լվովի եւ ընդհանրապէս Արեւելեան Եւրոպայի հայկական բնակավայրերի ձեռագրական մատենադարանների պատմութեան մի էջ, որ իր կարգին այդ ուղղութեամբ աշխատանքները շարունակելու համար նոր հեռանկարներ է պարզում:

ԳԵՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

Summary

ARMENIAN MANUSCRIPTS OF LVIV AND THE CATALOGUE OF FATHER HOVHANNES VARDAPET ZOHRABIAN

GEVORG TER-VARDANIAN

The most important sources for studying medieval repositories-libraries, their handwritten and printed book's lists, the methods and principles of using the same books in ancient times and other details are numerous lists compiled and not printed, researched in ancient and modern times, as well as in the colophons quite frequent listings of the recipients of same handwritten and printed books. However, such materials examination is almost unprocessed. Among all the manuscripts are printed and studied only two catalogues (Saghmosavank's and Amrdolu vank's in Baghesh).

In Yerevan, the Mashtots Matenadaran has started a difficult long work on the combined examination of the scattered lists in manuscripts and lists of handwritten books in the colophons, the manifestation of which is this article. Here is a very valuable list of manuscripts and kondaks of the productive intellectual theologian Mkhitarian vardapet Hovhannes Zohrapian (1756-1829) of the 18-19th centuries, which he saw and recorded in Lviv. Some of these handwritten materials, due to efforts of the same Vardapet, became part of the Mkhitarists' Matenadaran, and the current location of the other part of the manuscripts still needs to be found out in order to begin their study.

Here was illustrated a page of the history of manuscripts' repositories of the Armenian settlements of Lviv and Eastern Europe as a whole, which finds out new prospects for continuing work in this direction. This article is also a commemoration of the grateful vardapet of Armenian studies, his scientific achievements and his contribution to the development of Mkhitarists' Matenadaran.